


ՀԱՅԿԱԿԱՆ ԻՈՒ ԼՈՒՍԴՈՂԿՈՄԱՏ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՐԱԳՐԵՐ

**I ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
II ԳԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ**



ԼՈՒՍԴՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1938

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Բ Ա. Ց Ա. Տ Բ Ա. Կ Ա. Ն

Սույն ծրագրի նպատակն է տարբական դպրոցի աշակերտներին տալ հայոց լեզվի սիստեմատիկ գիտելիքների մի ամփոփ շրջան, վորոն ապահովի յուրացնելու ճիշտ, գիտակցական և արտահայտիչ կարգալու կայուն ուսուկացնելու ճիշտ, զրելու և իր մտքերը գրավոր և բանավոր արտահայտելու հմտություն:

Ուսուցման յուրաքանչյուր տարիա ծրագրային նյութը գասավորված է ըստ հետևյալ բաժինների. կարդալ, քիրականություն և գրել:

Գրականիկ աշխատանքում ըստոր այդ բաժինները պետք են սերտորեն կապակցվեն իրար հետ:

Այդ բաժիններից յուրաքանչյուրի մեջ որպանապես մտնում է բանավոր ու գրավոր խոսքի զարգացումը զանազան տեսակի բառարանային և վոճարանական աշխատանքների ձևով: Այդ աշխատանքների նպատակն է ուղղել աշակերտի խոսքի թերությունները, հարստացնել բառապաշտը, վարժեցնել ճիշտ նախադասություններ կազմելուն և այլն:

Ուսուցիչը հայոց լեզվին համարացված ընդհանուր ժամերից ժամանակ և առանձնազնում գրավոր աշխատանքներին՝ գոյսադրության և շարադրության, այլ և խոսքի զարգացման մի շարք բանավոր աշխատանքների համար, մանավանդ 1 և II գասարաններում:

1. ԿԱՐԴԱԼ

Առաջին կիսամյակն 1 գասարանում համարացվում է կարդալու ուսուցմանը (դրանանաչությանը):

Կարդալու և գրելու ուսուցումը կատարվում է նոյյունական (անալիտիկ-սինթետիկ) մեթոդով: Կարդալու և գրելու ուսուցումը կատարվում է միաժամանակ: Դա պետք է սկսվի մեր կենդանի խոսքը բառերի, բառերը՝ վանկերի, վանկերը՝ նշյանների վերլուծելուց (անալիզից):

Խոսքի վերլուծումը բառերի, վանկերի ու հնչյունների պետք ե կատարել լողովաթյան միջոցով (առանց յերեխաններին ցույց տալու ամբողջ ապագիր բառը):

Նոր հնչյունն առանձնացնելուց հետո, ուսուցիչը յերեխաններին ցույց և տալիս այդ հնչյունի տպագիր նշանը, այսինքն տառը, և ապա նրանց հետ միասին հատվող աղրյուրների շարժական տառերից կազմում բառեր ու նախադասություններ:

Այսպիսով կարդալը տրվում և ուսուցման I աստիճանում միայն անալիզից հետո. կարդացվում են այն բառերը, վորոնք դրանից անմիջապես առաջ վանկերի ու հնչյունների յին վերածել:

Շարժական տառերով, աշակերտների կազմած (վանկերով) կամ այնիւ ուշ դրի առաջ բառերը կարդալու ոգնում և նրանց, վոր մշակեն կարդարու (վանկերով), հետո յեղանակներ և չդիմեն տառետառ կարդարուն:

Ելքինարանի տեքստումը կարգում են այն ժամանակ, յերբ յերեխաններն արդեն վտրվել են շարժական տառերով բառեր կազմելուն: Յերեխաններն օկզրից և յետ պետք սահուն կարդան, սամանց բառերը նախորդ ստքում վերլուծելու:

Ուսուցիչը պետք և նախազգուշացնի յերեխաններին, վոր նրանք չտան տառերի անունները, և վարժեցնի նրանց վանկերով բառեր կադեկտն և կարդարուն:

Յերբ յերեխաններն արդեն յուրացրել են նոր հնչյունը և ապագիր, տառը, պետք և նրանց ցույց տալ նոր տառի գրավոր պատկերը, վերլուծել թե ինչ տարրերից և բաղկացած նոր տառը, և նրանց վարժեցնել վոր նախ գրեն տառի տարրերը, ապա տառը, հետո այդ տառն ունեցող ամենապարզ բառերը, և վերջապես, ավելի ուշ՝ յիշիու յերեք շատ հեշտ բառերից բաղկացած նախադասություն:

Գրելու աշխատանքը պետք և ափարտել երենց իսկ գրած տեքստը յերեխաններին կարդալ տարով:

Կարդալու ուսուցման ընթացքում անհրաժեշտ և պահպանել վերլուծող և կարդացվող բառերի հնչյունական կազմության յուրացման խիստ հաջորդականություն: Իրեն կարդարու և գրելու նյութ առաջին տառերի համար պետք և վերցնել այնպիսի բառեր, վորոնց հնչյունական վերլուծությունը հեշտ և կատարել:

Գրանահաշության առաջին տառերի համար ավելի լավ և վերցնել ձայնավորներ (ա, ե, ի, ո, ու,), և շփական բաղաձայններ

(ը, ա, ց, ն, զ, լ, ո, խ, ժ, մ, ղ) ունեցող բառեր: Այս բաղաձայններն այն առավելությունն ունեն, վոր կարող են յերկար արտասանվել առանց «ը» ձայնավորի, հետևաբար կարող են լուղությամբ առանձնացվել ամբողջ բառից կամ վանկից (որինակ սս ա ըրբ): Պայթուցիկ բաղաձայնների (ը, պ, փ, կ և այլն) ուսուցումը լավ և հետաձգել վերջը, վորովհետև գժվար և նրանց անջատել ձայնավորից:

Առաջին իսկ դասերից պետք և սկսել խոսքի զարգացման աշխատանքը, յերեխանների խոսքի թերություններն ուղղելը, հարցերի ճիշտ և լրիվ պատասխան ստանալը, վերապատմել տառը և այլն:

1-ին գասարանի յերկրորդ կիսամյակում և այնուհետև 2-րդ գասարանում շարունակվում ե յերեխանների կարդալը և կարդացածը հասկանալու ունակությունները զարգացնելու աշխատանքը: Պետք և յերեխաններին տմեն որ վարդեցնել բարձրաձայն կարդարուն և միաժամանակ զարգացնել նրանց մեջ ինքնուրույն, լուռ կարգալու ունակությունը:

1-ին գասարանի յերկրորդ կիսամյակում սկսվում և ուսուցչի աշխատանքը՝ յերեխանների արտադպրոցական ընթերցանության ուղղությամբ և շարունակվում ե 2-րդ, 3-րդ և 4-րդ գասարաններում:

Ուսուցիչը հետևում է, վոր յերեխանները կարդան արտադպրոցական ընթերցանության գրքերը, կատարում և նրանց կարդացած գրքերի հաշվառում, զրույց և անում կարդացված գրքերի ժամին, ոգնում և, վոր ավելի լավ հասկանան գրքի բովանդակությունը:

Կարդալու գասերին 1-ին և 2-րդ գասարաններում աշակերտները պետք և տարրական գիտելիքներ ստանան բնության մասին: Բնագիտական բովանդակություն ունեցող հոգվածներ կարդարուն պետք և նախորդի աշակերտների անմիջական ծանոթացումն այն առարկային կամ յերեւութիւն, վորի մասին խոսվում և հողվածում: այդ նպատակով կազմակերպվում են եքսկուրսիաներ բնության գիրկը, գիտումներ բնության մեջ, մերձպրոցական հողվամասում, կենդանի անկյունում, առարկայական դասեր և այլն:

Այդ պարապունքների համար անհրաժեշտ ժամանակը տրամադրվում են հայոց լեզվի գասերի հաշվին:

3-րդ և 4-րդ գասարաններում շարունակվում և աշակերտների գիտակցական, ճիշտ, արտահայտիչ և բավականաչափ սահուն կար-

դալու ունակություններ ստեղծելու աշխատանքը, վորոն սկսվել է նախորդ դասարաններում:

Կարգացածը պատմելը, կարգացածի ստեղծագործական լրացումը, պլաններ կազմելը և վոտանավորներ անդիր անելը կիրառմելու յեն բոլոր չորս դասարաններում: Գեղարվեստական արձակի հատվածներն անդիր են արվելու Յ-րդ և Գ-րդ դասարաններում: Գեղարվեստական յերկի ընթերցանությունը պետք է ոգտագործի իրեւ յերեխաների կոմունիստական դաստիարակության հզոր զննք:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշակերտաներն արդեն I դասարանում ծանոթանում են նախադասությանը: Նրանք վարժվում են նախադասություններ գոնել տեքստի մեջ:

Նախադասության մեջ բոլոր բառերն իմաստով կապված են միմյանց հետ, ըստ վորում այդ կապը կարող է բացահայտվել հարցերով («Ճղան զբունում և պարտեզում ընկերների հետ»: Ո՞վ և զրունում, «Ճղան»: Ի՞նչ և անում տղան: «Զբունում և: Վորտեղ և նա զրունում: «Պարտեզում»: Ո՞մ հետ և նա զրունում: «Ընկերների հետ»):

Ցուրաքանչյուր նախադասություն ունի վորոշ առողջանություն, վորին պետք է վարժեցնել աշակերտին: Նախադասությունների հետ ծանոթացնելու համար պետք է ընտրել ավելի պարզ և հասկանալի որինակներ: Այդ որինակներին հետևելով յերեխաները կկազմեն նոր նախադասություններ:

I դասարանում աշակերտաները ձեռք են բերում բառը բաղադրիչ մասերի, վանկերի ու հնչյունների բաժանելու ունակություն, ըստ վորում նրանք ձեռք են բերում այն գիտելիքները, թե ինչ և ձայնավոր ու բաղաձայն հնչյունը:

Տառը վանկերի բաժանելու հմտությունը կապված է բառը սողագարձ անելու հետ:

II դասարանի ծրագրով արվող ուղղագրության հետ կապված քերականական պարապմունքների ընթացքում աշակերտաները գործնական ճանապարհով հեշտությամբ սկսում են հասկանալ և իրենց խոսքում (բանափոր ու գրավոր) գիտակցարար գործածել այնպիսի բառեր, վորոնք նշանակում են առարկա, հատկություն և գործողություն: Յերեխաները սովորում են նաև նախադասությունը վերլուծել բառերի, բառերը՝ վանկերի և հնչյունների, ճանաչում են ձայնավոր ու բաղաձայն հնչյունները, սովորում են բոլոր մեծատառով սկսելու կանոնները, վարժվում են

գրությամբ և արտասանությամբ տարրերվող, յո, յօ, յօւ, յերկհնչյուններ ունեցող բառերի, «ը» ձայնավորի, իկ, ակ, ուկի մասնիկների, «յ» ձայնակապի, իս, իս իսու, իե, յերկճայնավորների ուղղագրությունը:

III դասարանում ինչպես և IV դասարանում քերականության և ուղղագրության բաժինը մեծ տեղ է գրավում, վորովհետեւ այդ բաժինը պետք է ամուր հիմք դնի կարգալու, գրելու և բանավոր խոսքի ուղակությունների համար: Այսուղ աշակերտները ծանոթանում են, թե կապակցված խոսք կազմելու յեղանակներին (խոսքի մասերին):

Քերականությունից III դասարանում ավանդվում է նախադասության ուսմունքը, գոյականները և հոլովումը, տարրական գաղափար և արվում ածականի և պարզ ու բարդ բառերի մասին:

Նախադասության ուսմունքին պետք է նվիրել կեզ տարի, մյուս կես տարին զլիսավորապես պետք է արամազգրել գոյականին և հոլովմանը: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է քերականության զասին միշտ նախադարձաստվել Անհրաժեշտ և նախորոք ընտրած որինակներ ունենալ տվյալ կանոնի համար, ինչպես և վարժության համար՝ տեքստի հատվածներ: Որինակները պետք է լինեն ցայտուն ու կոնկրետ, առաջ չքերեն վոչ մի յերկվություն: Տեքստի ընտրությունը պետք է կատարել այսպիս գործադրությունը միշտ կատարել կանոնից շատ որինակներ: Ամեն մի կանոնի շուրջը պետք է այնքան վարժություններ կատարել վոր աշակերտները հմտանան շատ արագ կերպով ճանաչելու քերականական կատեգորիաները և նախադասության անդամները (յենթակա, ստորոգյալ յենթակայի լրացումներ, ստորոգյալի լրացումներ, գոյականներ, ուղղական, սեռական, տրական, հայցական և մյուս հոլովներով գործածված բառերը և այլն): Նախադասության ուսուցման հետ միաժամանակ ուսուցվում է նաև համապատասիրն կետագրությունը:

IV դասարանում ուսուցվում են բայց և նրա խոնհարումը, անձնական գերանունը, թվականը, մակրայը, կապը, շաղկապը և ձայնարկությունը: Համեմատաբար շատ ժամանակ պետք է տրամադրել բայց խոնհարման ուսուցմանը, իսկ մյուս խոսքի մասերի վերաբերյալ տրվում է միայն նախական ծանոթություն, բայց այնպիս, վոր տարեկերջին յերեխաները հմուտ կերպով կարողանան վորոշել, թե տեքստի մեջ յուրաքանչյուր բառ խոս-

քի վոր մասին և պատկանում:

Քերականության յուրաքանչյուր բաժինն անցնելիս պետք է անցնել նաև դրա հետ կապված ուղղագրական կանոնները:

IV դասարանում ավանդում և բառագիտությունը՝ համեմատաբար ընդարձակ ծավալով: Բառակազմության ուսուցման ընթացքում ևս պետք է հաճախ վարժություններ կատարել և ոգուագործելով ամեն մի հարմար առիթ, թե ուղղագրություն սովորեցնել և թե վարժեցնել աշակերտներին՝ հարստացնելու իրենց բառապահարը՝ նոր բառեր ստեղծելով միջոցով:

Ուղղագրական բոլոր հիմնական կանոններն ավանդում և ավարտվում են: IV դասարանում: Առանձնապես պետք է ուշադրություն դարձնել օր» ձայնավորի, յերկշնչյունների և գրությամբ ու արտասանությամբ տարրերվող բառերի ուղղագրության վրա:

IV դասարանում տարրական գաղափար և տրվում նաև բարդ նախադասության մասին, ապա նաև ուղղակի և անուղղակի խոսքի մասին:

Չորրորդ դասարանի վերջին քառորդը հիմնականում պետք տրամադրել յերկրորդ, յերրորդ և չորրորդ դասարաններում անցնածի կրկնողությանը:

Կրկնողության ընթացքում պետք է նախադասության բառնավոր և գրավոր վերլուծություն կատարել, թե՝ ըստ անդամների և թե ըստ խոսքի մասերի:

Նախադասությունն ըստ խոսքի մասերի վերլուծելիս աշակերտները պետք է գրեն և ամեն բառի քերականական այն հատկանիշները, վորոնք ուսուցվել են ըստ ծրագրի պահանջի:

3. ԳՐԵԼ

I դասարանում աշակերտը սովորում է գրել տառեր, բառեր և փոքրիկ նախադասություններ:

Առաջին կիսամյակում արվում է արտագրություն ձեռագիր տեքստից (գրատախտակից, այբբենարանից, դասագրքից):

Յերկրորդ կիսամյակում արվում է տեքստից ընտրած առանձին բառերի ու նախադասությունների արտագրություն, ինչպիս և արտագրություն բաց թողած բառերը լրացնելով: Միաժամանակ արվում են դիտողաւորդական թերզրություն (լուսությամբ գրել ծանոթ նախադասությունները կարգալով դասագրքում կամ գրատախտա-

կից) և լողական թերզրություն (լողությամբ գրել բառեր և կարծ նախադասություններ):

II դասարանում տրվում են դասարանական և տնային գրավոր աշխատանքների հետեւյալ տեսակները՝ ձեռագիր ու տպագիր տեքստի բառացի արտագրություն, տեքստից ընտրված առանձին նախադասությունների և բառերի գրառում, արտագրություն՝ լրացնելով բաց թողած տառելը կամ բառերը, փոփոխելով բառերը, ընդարձակելով նախադասությունները, առանց տեղեկանքի համար տված բառերի:

Տրվում են զանազան ձևի թերզրություններ՝ նախազգուշական դիտողական, նախազգուշական լողական, ստեղծագործական, ստուգողական:

Բացի դրանից, կարգալու, քերականական և գրելու դասերին տրվում են խոսքի զարգացման կապակցությամբ աշխատանքներ՝ կազմել նախադասություններ տվյալ բառերով, հարցերի պատասխաններ, հեշտ պատճիվածքների փոխադրություն, փոքրիկ յերկերի շարադրություն—բանավոր նախապատրաստությունից հետո:

Հերթ դասարանում անհրաժեշտ է շարունակել գրելու տեսակետից դժվար բառերի անալիզը:

Բացառիկ մեծ նշանակություն ունի առաջին և յերկրորդ դասարանների գրավոր աշխատանքների ճիշտ դրվագքը. ուսմանաջին և յերկրորդ տարիններում յերեխայի գրածը խիստ խոր և անջնջելի հետք և թողնում:

Ուստի պետք է ձգտել վոր աշակերտները գրեն գեղեցիկ ճիշտ և անսխալ: Դա պետք է ամուր հիմք ծառայի իրենց մտքերը գրագետ կերպով շարադրելու հմտության հետագա զարգացման համար:

III և IV դասարաններում պետք է տրվեն հետեւյալ գրավոր աշխատանքները.

ա) Արտագրել տեքստեր՝ բառերը փոփոխելով, բառեր պիտի լրացնելով, նախադասություններ փոփոխելով, կանոնը արտագրություն՝ ավելացնելով բաց թողած տառերը և նախադասությունները, արտագրել փոքրիկ փոտանավորներ և փոքրիկ ցիտատներ:

բ) Թերզրություններ՝ նախազգուշական—դիտողական, նախազգուշական—լողական, բացատրական, ինքնաթելադրություն, ստեղծագործական, ազատ և ստուգողական:

Այդ դասարաններում գրավոր աշխատանքներին են վերա-

բերում նաև՝ լրացնել սխնմաներ և աղյուսակներ նախադասություններ վերլուծելու համար, կազմել բառեր ըստ տված մասերի (բառակազմություն և գրավոր վերլուծություն): Բացի գրանից, այսպես ինչպես Ա դասարանում, կարդալու, քերականության և գրելու դասերին տրվում են խոսքի զարգացման դրավոր աշխատանքների հետեւյալ տեսակները. բառարանային աշխատանքներ (պատկերավոր արտահայտությունների արտադրություն, ընդհանուր արմատ ունեցող բառերի ընտրություն), կազմել նախադասություններ տված բառերից, հորինել և գրի առնել որինակներ, կազմել պատմվածքներ (շարադրություններ), պատմվածքի փոխադրություն (հարցերով, պլանով), շարադրություն նկարներով կարդացածի, լածի, տեսածի անալոգիայով, այլև տպավորություններով, հիշողություններով՝ տղատ թեմաների շուրջ: Շարադրության տեսակներից մեկն և պատի լրագրում թղթակցություն գրելը:

III և IV դասարաններում աշակերտների գրավոր խոսքը զարգացնելու համար պահանջվում և գրավոր աշխատանքների բաղմագանություն: Ըստ վորում պետք են նկատի ունենալ վոր ուղղագրության ուսուցումն այդ դասարաններում հիմնվում և հիմնականում աշակերտի կողմից տեքստը վերլուծելու և քերականության գիտելիքը գիտակցաբար գործադրելու հմտության վրա:

Ծ Ր Ա Գ Ի Բ

Առաջին դասարան
Առաջին կիսամյակ
ԿՈՐԴԱԼ ՅԵՎ. ԳՐԵԼ

1. Նախապատրաստել յերեխաներին գրածանաչության ուսուցման համար (մինչ այբբենարանային շրջան), գրույց յերեխաների հետ, խոսքը բառերի բաժանել, նկարչություն, նրբագծել տառերի տարրերի գրության:

2. Կարգալու և գրելու ուսուցում՝ լսողությամբ, առանց տեսողական ըկալման, խոսքը բաժանել բառերի, բառերը՝ վանկերի, վանկերը՝ հնչյունների: Հնչյուններ և տառեր, կարդալ շարժական տառերով կազմված բառեր, կարդալ այբբենարանից համապատասխան համապատասխան բառերով պատասխաններ տալ ուսուցչի ամենապարզ հարցերին՝ ըստ կարգացած տեքստի:

3. Գրելու առողջապահություն, կանոնավոր նստելը: Գրել

ըունելու հմտություն, կարողանալ կանոնավոր վարվել թանաքի հետ:

Դրել փոքրատառերի և մեծատառերի տարրերը: Գրել բառեր ու նախադասություններ, գրել չորս տողանի թեք գծերով տետրում: Արտադրություն ձեռագիր տեքստից, լսողությամբ գըրել բառեր ու կարճ նախադասություններ:

4. Զարգացնել բարձրաձայն, հստակ, ըմբռնելի, առանց շտապելու խոսելու հմտությունը, ուղղել խոսքի թերությունները՝ շշնջախոսություն, թոփովախոսություն, կակազելը, թվատություն, վերջավորություններ կուլ տալը և այլն:

Յերեխաների կյանքին, նրանց աշխատանքին, հասակավորների աշխատանքին, դպրոցին, բնության վերաբերող ուսուցչի հարցերին կարծ, բայց ամփոփ նախադասություններով պատասխանելու հմտության վարպայում:

Երջապատող իրականության դիտողությունները հաղորդելու և ուրիշի խոսքը (փոքրիկ պատմվածքներ կամ բացատրություններ) լսելու հմտության զարգացում: Աշխատանք նկարով, նկարի բովանդակությանը վերաբերող հարցերին պատասխանելու հմտություն (որինակ՝ «Ի՞նչ է նկարված»: Պատասխանի տեսակները. «Շունը վազում ե», «Յերեխաները ծաղիկ են քաղում»):

Ուսուցչի կարգալը լսելով անգիր անել բովանդակությամբ յերեխաներին մոտ և լեզվով մատչելի փոքրիկ գոտանավորներ:

Յերեխաների կիսամյակ

I ԿՈՐԴԱԼ

1. Գիտակցական և սահուն կարգալ փոքրիկ պատմվածքներ՝ առանց բառերն ու վանկերը ազագաղելու և կրկնելու:

Իմաստավոր լրիվ պատասխաններ տալ կարդացած տեքստի շուրջն ուսուցչի տրված հարցերին: Կարդացածը վերապատճելը:

Ինքնուրույն կերպով կարծ պատմվածքներ և հոգվածներ կարգալ (գասարանում և տանը):

2. Ուսուցչի կարգալը լսելով անգիր անել բովանդակությամբ յերեխաներին մոտ և լեզվով մատչելի փոքրիկ գոտանավորներ:

II ՔԵՐՄԱԿԱՆԱԿԱՆ ՍԿՂԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1. Կարողանալ գրեի մեջ դտնել և կարգալ նախադասություն: Կարգալիս հետեւ դադարներին և համապատասխան առողջապահության:

2. Կազմել կարճ նախադասություններ հարցերի ովնությամբ՝ «Զին (ի՞նչ և անում) վազում ե» և այլն: Կարողանալ նախադասության մեջ գտնել մտքով իրար հետ կազմած բառերը:

3. Աշխատանք նկարով: Գտնել նկարների տակ գրելու համար պարզ նախադասություն (որինակ՝ «Մուկն ու կատուն»), «Գայլն ու աղվեսը», «Կատուն խաղում ե»): Պատմել ամենապարզ նկարների բովանդակությունը, կոլեկտիվ կերպով պատմվածք հորինել՝ գրի առնելով գրատախտակին և տեարներում (արտադրություն):

4. Գլխատառի գործածություն նախադասության սկզբում: Գաղափար հատուկ անունների մասին և մեծատառի գործածությունը նրանց մեջ: Այբուբենը: Զայնավոր և բաղաձայն հնչյուններ (տառեր): Բառերը վանկերի բաժանել: Բառերի տողադարձը: Դիտենալ վոր տողադարձ անելիս տողադարձի նշան պետք և դնել: միավանկ բառերը չի կարելի տողադարձ անել:

5. Հնչյուն և տառ: Հնչյունը և տառը համեմատելու վարժություն (այն գեղքում, յերբ գրությունը և արտասանությունը միմյանցից տարբերվում են, որինակ՝ վարդ-վարթ), «և» գիրը վորպես սղագրության նշան: Գիտենալ վոր «և» նշանը մեծատառ ձև չունի և նախադասության սկզբին գրվում է «Յեվ»:

III ԳՐԵԼ

Մեծատառերի, առանձին բառերի ու նախադասությունների գրություն, գրատախտակից ու գրքից ճշտությամբ արտադրել բառեր, նախադասություններ և կարճ տեքստեր: Լսողությամբ գրել նախադասություններ և փոքրիկ տեքստեր:

Յերկրորդ դասարան

I ԿԱՐԴԱԼ

1. Կարողանալ հասկանալով, սահուն և արտահայտիչ կարդալ փոքրիկ պատմվածք կամ հոդված և ապա վերապատմել բովանդակությունը:

Կարդալու ընթացքում պահպանել վերջակետը, հարցական ու բացականչական նշանները: Կարողանալ արտահայտիչ կերպով դերերով կարդալ փոքրիկ տեքստեր:

2. Կարողանալ լրու կարդալ՝ կատարելով ուսուցչի առաջարանքները (պատասխանել տրված հարցին սեփական բառերով կամ տեքստի համապատասխան հատվածներով):

3. Պատասխանել կարդացածին վերաբերող հարցերին: Կարդացածը պատմել: Կարդացածը մասերի բաժանել և ուսուցչի հետ պլանը կազմել:

4. Ծանոթանալ գրքին. գրքի շապիկը, անվանաթերթը, վերնագիրը, հեղինակի անունը, եղերի համարակալումը, տեքստի մեջ յեղած վերնագրերը:

5. Զբույցներ կարդացած գրքերի մասին, համառոտակի հաղորդել գրքերում պատմած ամենահետաքրքիր հպիվողները:

6. Աշակերտների բառապաշարի հարստացում. տեքստում հանդիպող բառերի իմաստի պարզաբանում. գտնել հականիշ բառեր (աղմուկ-լուսթյուն):

7. Անգիր անել վոտանավորներ:

II ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1. Կրկնել առաջին գասարանում անցածը:

Շարունակել պարզ նախադասություն կազմելու վարժությունները:

Կարողանալ նախադասություններից պատմվածք կազմել: Կարողանալ պարզ նախադասության մեջ գտնել մտքով իրար հետ կապ ունեցող բառերը: Կարողանալ լրացնել նախադասությունների մեջ բաց թողած կամ հարցերով փոխարինված բառերը թեքանավոր և թեք գրավոր. որինակ՝ Յեվ... (ի՞նչ եմ անում) տուն. Աշակերտները սովորում են... (վհրտեղ), Աշակերտները վերադարձն... (վհրտեղից) և այլն:

2. Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկա. գտնել շրջապատող կամ ծանօթ անձերի, կենդանիների, թշունների, ձկների, միջատների, զանազան իրերի անուններ: Հարցեր տալ վորոնք վերաբերում են այդ առարկաների անուններին (մվ, ի՞նչ ում, ի՞նչի, ում, ի՞նչին, ում, ի՞նչ ումից, ի՞նչից, ումնիվ, ի՞նչնիվ, ումն մեջ, ի՞նչն ում):

Հոգնակի երեներ մասնիկները:

3. Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկայի հատկությունը և իմանալ, թե նրանք ի՞նչ հարցի յեն պատասխանում (ի՞նչպիսի, վհրպիսի): Հատկությունն ցույց տվող բառեր գտնել և կապել այն առարկաների անվան հետ, վորոնց վերաբերում են այդ բառերը: Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք թիվ են ցույց տալիս:

4. Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք ցույց

հն տալիս առարկայի գործողություն, տալով հետեւյալ հարցերը՝
ի՞նչ ե անում, ի՞նչ արեց, ի՞նչ ե անելու:

5. Մեծատառի գործածության այն բոլոր գեպքերը, վոր
մատչելի յեն աշակերտներին: Վարժվել ոժանդակ բայն (առանց
տերմինի) անջատ գրելուն, նախորդող բառերի հետ միացած
կարդալուն:

6. Վանկ և բառերի տողադարձ: Շարունակել տառերը վան-
կերի բաժանելու վարժությունները: Դրելու բառերը տողադարձ
անել՝ բաժանելով վանկերի: «Հ» ձայնավորը տողադարձի ժամա-
նակ: Տողադարձի տարրական կանոնները: Այրութեն: Սղագրու-
թյան նշանի՝ «Ա»-ի գործածությունը:

7. Ուղղագրական վարժություններ:

Գրությամբ և արտասանությամբ տարրերվող բառերի ուղ-
ղագրությունը (Բ-Փ, Գ-Ֆ, Դ-Բ, Ե-Զ, Ղ-Խ):

Ե-ից հետո չարտասանվող ն-ի ուղղագրությունը: «Ը» ձայնա-
վորը բառասկզբում՝ զբ, զգ, տս, սկ, սպ, սր, սս, սփ, յերկրա-
զաձայններից առաջ: «Ը» ձայնավորը բառավերջում: Իկ, ուկ, ուկ,
ուի մասնիկների ուղղագրությունը. որինակ՝ ուիկ, գետակ,
ձագուկ, աշակերտանի:

Յ-ով յերկնչյուն ունեցող բառերի ուղղագրությունը. որի-
նակ՝ յա, յո, յու, յե, յի:

Յ ձայնակապի ուղղագրությունը (այտ, այո, այու, այի, եյի,
եյտ, ոյտ, ոյի, ոյե):

Իտ, իո, իու, իե և իի յերկձայնավորների ուղղագրությու-
նը.

(Մարիամ, պիտիներ, միություն, Դանիել, Թրիլիսի):

Կարողանալ ոգտվել թե դասագրքի և թե պատի ուղղագրա-
կան բառացուցակներից:

8. Առողանության նշաններ: Գիտենալ հարցականի, բացա-
կանչականի և շեշտի նշանակությունը բանավոր խոսքի և գրու-
թյան մեջ, ինչպես և նրանց գործածության պարզագույն գեպ-
քերը:

9. Աշխատանք նկարով: Գրքում յեղած կամ ուսուցչի տված
հարցերի ոգնությամբ պատմել նկարի բովանդակությունը: Դա-
սագրում գտնել լոգունգներ, նախադասություններ կամ վոտա-
նավորներ՝ նկարի տակ գրելու համար: Ուսուցչի գեկավարությամբ
գրավոր շարադրել նկարների համառոտ բովանդակությունը:

10. Առարկաների անրւնները խմբավորել ըստ այդ տոպար-

կաների մեծության (որինակ՝ գետ-գետակ, առու-առովակ): Հիշու-
զությամբ համեմատել տարրեր առարկաներն իրենց բնորոշ
հատկություններով (որինակ՝ կանաչ տերեւ, կարմիր վարդ):

11. Կազմել սեփական բառարան՝ ոգտագործելով դասարա-
նի պատին փակցրած և դասագրքի նկարները: Հականիշ բառեր
կազմելու վարժություն (մեծ-փոքր): Կարողանալ ոգտագործել
դասագրքի բառացուցակը:

12. Նախագասություններ կազմել (հարցերին լրիվ պատաս-
խաններ տալ տված բառերից նախագասություններ կազմել):

III. ԳՐԵԼ

1. Ճիշտ և կանոնավոր նստելու, գրիչը կանոնավոր բռնելու
և թանաքի հետ կանոնավոր վարվելու հմտության ամրացում:

Ավելի արագ (ուսման առաջին տարվա հետ համեմատած),
պարզ և գեղեցիկ գրել չորս տողանի թեք գծեր՝ չունեցող տես-
րերում (տես գեղագրության ծրագիր՝ յերկրորդ դասարանի հա-
մար), պահպանելով 75°-թեքություն: Դրել առանց բառերի դա-
սագրությունը փոփոխելու, առանց տառեր բաց թողնելու,
առանց ջնջումների՝ կատարելով ճիշտ տողադարձ:

2. Դասագրքի հոդվածները, աշակերտի տպագործություննե-
րը, ապրումներն ու դիտողությունները մշակել և գործնել գի-
տակական արտագրության, դիտողա-բացատրական թելադրու-
թյան և ուղղագրական տեսակետից մշակված շատ կարծ շարա-
գրության նյութ: Ուսուցչի գեկավարությամբ մի քանի նախադա-
սություններով գրավոր շարադրել նկարների համառոտ բովան-
դակությունը:

3. Գրատախտակին գրված հարցերին գրավոր պատասխան-
ներ տալով՝ պարզ շարագրություններ գրել:

Համառոտ շարադրել կարդացած պատմվածքի բովանդակու-
թյունը:

Եւրոպ դասարան

I. ԿԱՐԴԱԼ

1. Բարձր, արտահայտիչ և հասկանալով կարդալ բովանդա-
կությամբ մատչելի տեքստեր:

2. Տեքստում գտնել այն տեղերը, վորոնք պատասխանում
են տրված հարցերին: Կարողանալ տեքստը մասերի բաժանել և
կապակցված պատմել այդ մասերի բովանդակությունը (պլան
կազմել): Կարողանալ տեքստում գտնել այն տեղերը, վորոնք

հաստատում են այս կամ այն միտքը:

Աշակերաների բառապաշարի ընդարձակում, դիտել առանձին արտահայտությունների և բառերի նշանակությունը, կազմակերպությունների և խոսքի մեջ գործածել համանիշ բառերը: Կարողանալ տեքստից առանձնացնել պատկերավոր ածականներն ու համեմատությունները:

3. Ծանոթություն լրագրին և պիտուկավան լրագրի ոգտագործումը զանազան աշխատանքների համար: Լրագրում ի՞նչպես դանել անհրաժեշտ նյութը, ի՞նչպես ոգտագործել այդ նյութը լրագրային կտրտվածքների տախտակի համար, պլակատի համար և այլն:

4. Զրույց արտադասարանական ընթերցանության մասին (ի՞նչ գիրք ես ընտրել դպրոցական գրադարանից, ընկերոջդ խորհուրդ կտաս ի՞նչ կարդալ ի՞նչով ե դուք յեկել այս կամ այն գիրքը, պատմիր կարգացածիդ մասին):

5. Պատմել կարգացած հոդվածի կամ գրքույկի բովանդակությունը:

6. Անգիր անել վոտանավորներ և արձակի գեղեցիկ հատվածներ:

II ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Նախադասության սահմանումը: Նախադասության վերլուծությունն ըստ բովանդակության և բառերի կապակցության: Զանազան թեմաների շուրջը նախադասություններ կազմելու վարժություն՝ կապված բանափոր խոսքի գարգացման հետ:

2. Ծանոթություն պարզ, համառոտ նախադասության հետ: Նախադասության յենթական և ստորոգյալը. ի՞նչ հարցերի յեն պատասխանում նրանք:

Համառոտ նախադասություն կազմելու վարժություն: Գործնական ծանոթություն յենթակայի և ստորոգյալի համաձայնությանը թվով և դեմքով (առանց տերմինի):

3. Ծանոթություն տալ ընդարձակ նախադասության մասին. յենթակայի լրացումներ և ստորոգյալի լրացումներ: Ծանոթություն հարցական, բացականչական, պատմողական և հրամայական նախադասություններին: Կետագրություն: Համադասընդումները ունեցող նախադասությունները: Մեկից ավելի յեն-

թակա և մեկից ավելի ստորոգյալ ունեցող նախադասություններ:

Ծանոթություն ուղիղի խոսքին: Տարրական և գործնական ծանոթություն տալ չակերտների և անջատման գծի ու փակագծերի գործածման մասին. ծանոթություն բաղմակետի գործածությանը: Ծանոթություն բութի գործածությանը թվարկման ժամանակ:

4. Բարդ բառեր. բառաբարդության կանոնավոր ձեվերը. հողակապ. հնչյունափոխություն. օռա և օրա ձայնավորների փոխվելը չգրվող «ը»-ի (ջուր-ջրաղաց, կիր-կրաքար), կամ բոլորովին գեղչվելը (անասուն-անամնապահ):

5. Ճանաչել նախադասության մեջ առարկա ցույց տվող բառերը (իրեր, մարդիկ, յերեսույթներ և այլն): Դրեւ թե ի՞նչ հարցերի յեն պատասխանում դրանք (ո՞վ, ի՞նչ և այլն). գաղափար գոյական անվան մասին (տերմինը սովորեցնելով), իրեւ առարկա ցույց տվող բառեր: Հատուկ և հասարակ անուն: Մեծատառի գործածության բոլոր գեղչերը: Գոյականների թիվը: Յեղակի և հոգնակի: Վորոշող հողը՝ «ը» կամ «ն» և նրա գործածությունը: Դիտել՝ գոյականի ձեվերն իրեւ յենթակա և իրեւ լրացում գործածելու ժամանակ փոխվո՞ւմ են, թե չեն փոխվում (որինակ՝ գրիչը կոտրվեց: Շուշիկը գրում և գրիչով):


6. Գաղափար ուղղական հոլովի մասին՝ յենթակայի կապակցությամբ: Նախադասությունների ոգնությամբ հարցերով սովորեցնել մնացած հոլովները (սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական), բացարերով յուրաքանչյուրի եյական առանձնահատկությունը և տալով անունը:

7. Հատկություն ցույց տվող բառեր (2-րդ գասարանում անցածի կրկնություն և խոզացում): Նախադասության մեջ գլուխել բառեր, վորոնք ցույց են տալիս, թե ի՞նչպիսին ե առարկան: Ծանոթություն ածականին:

8. Ողղագրական վարժություններ՝ գրությամբ և արտասանությամբ իրար չհամապատասխանող բառերի, «ը» ձայնակապի վերաբերյալ. I և II դասարաններում անցած ուղղագրական կանոնների և վարժությունների կրկնություն և խորացում:

III Գ Բ Լ

- Արտագրություն առաջադանքների:
- Զանազան տեսակի թերապիւթյուններ:



3. Պատմվածքների գրավոր փոխադրություն նախորսք կազմված պլանով կամ տուանց պլանի:

4. Պատմողական բնույթի պարզ թեմաների շուրջը փոքրիկ ինքնուրույն շարադրություններ (իր, իր ընկերոջ, բարեկամի կամ մեկ ուրիշի կյանքից գիտվածներ, անցքեր, վորոնց մասնակից և յեղել աշակերտը և այլն):

5. Մի նկարի կամ մի թեմայով միացած նկարների աերիատե բովանդակության շարադրումը: Նկարի ստեղծագործական լուսացում (յերեխաները խոսում են գրում են այն մասին, թե ի՞նչ են նախորդել նկարում արտահայտվածին և ի՞նչ պիտի հաջորդել դրան):

6. Կարողանալ փոքրիկ նամակ կազմել:

7. Պատի լրագրին կամ մանկական ամսագրին թղթակցություններ գրել:

8. Առաջն կիսամյակի վերջում գրել մի տողանի տեսքում, փաքրիկ թեքությամբ գետի աջ: Պարզ, ընթեռնի և մաքուր գրելու ունակության հնատաղա զարգացում:

Տարրորդ դասարան

I. Կ Ս Բ Դ Ա Լ

1. Կարողանալ արտահայտիչ կարդալ:

2. Կարողանալ պատմվածքի միջից առանձնացնել գլխավոր գործող անձանց և նկարագրել նրանց արտաքինը, բնավորության գծերը, գնահատական տալ նրանց վարմութինը: Նշել թե ի՞նչ վերաբերունք ունի հեղինակը նրանց հանդեպ:

3. Հորվածքը մասների բաժանել պլան կազմել:

4. Առանձնացնել և բացատրել պատկերավոր վոճերը՝ արտահայտված ածականով, փոխարերական բառերով և համեմատություններով: Կազմել զանազան նախադասություններ և միենույն բառը գործածել թե ուղիղ իմաստով և թե փոխարերական իմաստով: Սեփական խոսքի մեջ համեմատություններ գործածելը: Քաղաքական և գիտատեխնիկական տերմիններ: Նրանց նշանակությունը մեր խոսքի մեջ:

5. Անգիր սովորած վատանավորներն ու գեղարվեստական արձակի փոքրիկ հողվածներն արտահայտիչ կարդալ:

II. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Առարկայի գործողություն ցույց տվող բառերի մասին անցածի կրկնություն: Ծանոթություն բայցին, բայցի խոնարհումը, բայցի գեմքը և թիվը: Յենթակայի գործողությունը կամ դրու-

թյունը ժամանակի կապակցությամբ՝ ներկա, անցյալ, ապառնի: Բայցի ժամանակը: Գաղափար բայցի խոնարհման ժիտական ձեվի մասին: Գաղափար բայցի հրամայական ձեվի մասին: Գաղափար բայցի անորոշ ձեվի մասին:

2. Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք փոխարինում են գոյականին. անձնական գերանուններ (յես, դու, նա, մենք, դուք, նրանք): Անձնական գերանունների նորոգումը:

3. Նախադասության մեջ գտնել բառեր, վորոնք ցույց են տալիս առարկայի թիվը կամ կաբուլ: Ծանոթություն թվականին և նրա տեսակներին:

4. Նախադասության մեջ գտնել բառեր, վորոնք ցույց են տալիս, թե ի՞նչպես, վ՞որտեղ, ի՞նչ նպատակով կամ պատճառով և կատարվում գործողությունը: Ծանոթություն մակրացին:

5. Ծանոթություն կապերին, նրանց նշանակությունը նախադասության մեջ:

6. Ծանոթություն շաղկապներին. նրանց գերը նախադասության մեջ:

7. Ծանոթություն ձայնարկություններին:

8. Կոչական բառեր, նրանց նշանակությունն ու գործածությունը լիզվի մեջ:

9. Բառակազմություն, պարզ, և բարդ բառեր. «ո» հոդակապը, անհոգակաղ բարդություններ, գաղափար արմատի և ածանցի մասին: Պարզ և ածանցավոր բառեր. նախածանցներ (ան, ս, գեր, արև և այլն) և վերջածանցներ (ոս, ուրբան, եղեն, յան, ստան, ոց, ային, տկան, ող, իշ, տկ, իբ, յուն, ում և այլն):

10. Հնչյունափոխություն. Յ-րդ դասարանում անցածի կըրկնություն և խորացում (գարբին—գարբնոց և այլն):

11. Ուղղութական վարժություններ՝ Դ և Թ, Գ և Բ, Զ և Չ Զ և Ց, Ղ և Խ, Բ և Ռ տառերի ուղղութական վարժություն շորջը: «Ո» ձայնավորը բառամիջում:

12. Գրավոր աշխատանքների ժամանակ ուղղագրական բառգրքույկներից ոգտվելու վարժություն: Ուղղագրական բառատեսքը պահել, նշանակելով այսուղ այն բառերը, վորոնց գրությունը դժվար ե:

13. Նախադասության մասին անցածի կրկնություն: Նախական պրակտիկ ծանոթություն բարդ նախադասությանը (յերկու պարզ նախադասությունների միացումը մի բարդ ամփոփ նախադասության մեջ):

14. Ուղղակի և անուղղակի խոսք: Ուղղակի խոսքը անուղղակի խոսքի վերածելու վարժություն:

15. Նախադասության վերլուծություն ըստ խոսքի մասերի և նախադասության անդամների:

III Գ Բ Լ

1. Արտագրություն առաջադրանքով:
2. Զանազան տեսակի թերապություններ:
3. Կարդացած ինքնուրույն կերպով շարադրելը:
4. Ինքնուրույն շարադրություններ՝ պատմողական տիպի մատչելի թեմաների շուրջը:

5. Ստեղծագործական շարադրություն, պատմվածքը շարունակել (հասրել սկիզբ, վերջ և այլն): Ինքնուրույն ստեղծագործական պատմվածքներ գրելը (իր կյանքից, շրջապատող մարդկանց կյանքից, հասարակական վորեե գեղաքի մասին և այլն):

6. Շարադրություն գրել ըստ նախահեղափոխական և ժամանակակից նկարիչների գործերի, վորոնք արտացոլում են հեղափոխական պայքարը, սոցիալիստական շինարարությունը, մանուկների կյանքը և այլն. նկարագրել նկարը, հաղորդելով գեղարվեստական մանրամասնությունները: Ցույց տար, թե նկարում պատկերած եպիզոդին ի՞նչ կարող եր նախորդել ի՞նչ կարող եր հաջորդել:

**ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ
ՆՅՈՒԹԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՇԽՈՒՄՆ ՀՍՏ ԺԱՄԵՐԻ*)**

ԱՌԱՋԻՆ ԴԱՍՄԱՐԱՆ

Առաջին կիսամյակն առաջին դասարանում նվիրվում և գրամանաշության ուսուցմանը:

3-րդ Գ Ա. Ռ Ո Բ Դ Դ

1. Նախադասություն 6 ժամ
2. Մեծատառը հատուկ անուններում 6 ժամ
3. Այբուբեն: Զայնավոր և բաղաձայն հնչյուններ (տառեր) 3 ժամ
4. Բառերի բաժանումը վանկերի: Բառերի առղադարձը զրության ժամանակ 4 ժամ
5. Կրկնություն 6 ժամ

Ընդամենը 25 ժամ

*) Ծրագրային նյութն ըստ ժամերի բաշխելիս ուսուցիչը պետք է հարմարվի իր դասարանի պատրաստականությանը:

4-րդ Գ Ա. Ռ Ո Բ Դ Դ

- | | |
|--|-------|
| 1. Յերկնչուների գրությունը | 8 ժամ |
| 2. Գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերի
ուղղագրություն | 8 ժամ |
| 3. Կրկնություն | 8 ժամ |

Ընդամենը 24 ժամ

ՑԵՐԿՐՈՐԴ ԴԱՍՄԱՐԱՆ

1-ին Գ Ա. Ռ Ո Բ Դ Դ

- | | |
|---|--------|
| 1. 1-ին դասարանում անցածի կրկնություն և ամփոփում | 5 ժամ |
| 2. Հոգնակի-եր և ներ վերջագործությունը | 10 ժամ |
| 3. Նախադասություններ լրացնելու վարժություն | 4 ժամ |
| 4. Առարկա նշանակող բառերի առանձնացումը նախադա-
սության մեջ | 4 ժամ |
| 5. Առարկաների հատկության (հատկանիշ) ցույց տվող բառերի
առանձնացումը նախադասության մեջ | 4 ժամ |
| 6. Առարկաների գործողություն ցույց տվող բառերի առանձնա-
ցումը նախադասության մեջ | 4 ժամ |
| 7. Կրկնություն | 5 ժամ |

Ընդամենը 36 ժամ

2-րդ Գ Ա. Ռ Ո Բ Դ Դ

- | | |
|---|--------|
| 1. Զայնավոր և բաղաձայն հնչյուններ | 4 ժամ |
| 2. «» ձայնակազի գործածությունը | 12 ժամ |
